ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(բողոք թիվ 1/10246-23)

ք. Երևան
28.11.2023թ.

<u>Մարդու իրավունքների ենթադրյալ խախտման մասին բողոքի քննարկման ընթացքը և ձեռնարկված միջոցները.</u>

1. 2023 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին է զանգահարել քաղաքացի Սուրեն Սահակյանը և տեղեկացրել, որ Երևան քաղաքի Մաշտոցի պուրակի տարածքում ցանկանում է վրան տեղադրել՝ հանրային քննարկում և հավաք իրականացնելու նպատակով, որին մասնակցելու են ոչ ավելի, քան թվով 100 քաղաքացիներ, ուստի, տվյալ պարագայում, ինքը՝ որպես հավաքի կազմակերպիչ, չունի որևէ պարտականություն իրազեկելու իրավասու մարմնին հավաքի կազմակերպման վերաբերյալ:

Սուրեն Սահակյանը հավելել է, որ տվյալ պահին Մաշտոցի պուրակի տարածք են ներկայացել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ·այսուհետ՝ նաև Ոստիկանություն· թվով շուրջ 40 ծառայողներ՝ Ոստիկանության պետի տեղակալի գլխավորությամբ և խոչընդոտում են հավաքի իրականացմանը՝ չթույլատրելով վրան տեղադրել: Ըստ քաղաքացու՝ վերջինս տեղեկացրել է Ոստիկանության ծառայողներին այն մասին, որ ժամը 00:00-ին պատրաստվում է վրան տեղադրել: Ուստի, քաղաքացին

խնդրել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը նշված խնդրի կարգավորման հարցում:

2. Վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցչին Ոստիկանությունից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ վրանը չի թույլատրվում տեղադրել նշված վայրում՝ անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով:

3. Այնուհետև, Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին լրացուցիչ տեղեկություն է ստացվել առ այն, որ Մաշտոցի պուրակի տարածքից վարչական ձերբակալման են ենթարկվել հավաքի մասնակից մի շարք անձինք և տեղափոխվել Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին: Ի լրումն վերոգրյալի՝ Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին է զանգահարել քաղաքացի Սուրեն Սահակյանը և տեղեկացրել, որ Ոստիկանության ծառայողները վերցրել և ոստիկանության բաժին են տեղափոխել նաև վրանը:

4. Նշվածի հաշվառմամբ՝ սույն թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, Պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին, առանձնազրույցներ ունեցել ազատությունից զրկված անձանց հետ, քննարկել խնդիրները Ոստիկանության ներկայացուցիչների հետ:

5. Առանձնազրույցի ընթացքում ազատությունից զրկված անձինք տեղեկացրել են, որ շուրջ 25-30 քաղաքացիների մասնակցությամբ հավաք են իրականացրել, այնուհետև փորձել են վրան տեղադրել Երևան քաղաքի Միսաք Մանուշյանի անվան պուրակի (Մաշտոցի պուրակ) մոտակայքում, սակայն Ոստիկանության պետի տեղակալը, ինչպես նաև թվով շուրջ 40 ծառայողներ խոչընդոտել են վրանի տեղադրմանը:

Քաղաքացիները հավելել են, որ իրենք Ոստիկանության ծառայողներին խնդրել են ուղղորդել, թե որտեղ ավելի նպատակահարմար կլինի տեղադրել վրանը՝ ակնկալելով վերջիններիս կողմից աջակցություն թե՛ հասարակական կարգի ապահովման, և թե՛ իրենց՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով ամրագրված իրավունքների իրացման առումով: Ի պատասխան վերը նշվածի՝ Ոստիկանության ծառայողներն իրենց հայտնել են, որ չեն թույլատրում տեղադրել վրանը՝ ելնելով հասարակական անվտանգության ապահովման նկատառումներից:

6. Պաշտպանի ներկայացուցիչները Ոստիկանության Կենտրոնական բաժնի իրավասու ներկայացուցիչների հետ տեղում քննարկել են քաղաքացիների կողմից ներկայացված խնդիրները, այդ թվում՝ վրանը Ոստիկանության բաժին տեղափոխելու իրավաչափությունը: Ոստիկանության իրավասու ներկայացուցչի կողմից ներկայացվել է պարզաբանում առ այն, որ ելնելով այն հանգամանքից, որ քաղաքացիները վարչական

ձերբակալման են ենթարկվել Ոստիկանության ծառայողի կողմից հնչեցված՝ վրանը չտեղադրելու վերաբերյալ պահանջը չկատարելու հիմքով՝ ուստի, վրանը վարչական վարույթի շրջանակում պահվելու է Ոստիկանության բաժնում:

7. Վերոգրյալից բացի, 2023 թվականի օգոստոսի 21-ին զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է տարածվել այն մասին, որ գիշերը կրկին բերման է ենթարկվել հասարակական-քաղաքական գործիչ Սուրեն Սահակյանը՝ Մաշտոցի պուրակում վրան տեղադրելու համար: Բացի այդ, Ս. Սահակյանը, հաջորդող ժամանակահատվածներում ևս Մաշտոցի պուրակում վրան տեղադրելու համար ենթարկվել է վարչական ձերբակալման և տեղափոխվել Ոստիկանության ստորաբաժանում:

8. Ստացված տեղեկությունների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը 2023 թվականի օգոստոսի 21-ին գրություն է հասցեագրել ՀՀ ներքին գործերի նախարարին, որի կապակցությամբ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետի թիվ 12.2/24166-2023 գրությամբ ներկայացվել են պարզաբանումներ:

9. Պաշտպանի աշխատակազմ ներկայացված պարզաբանումների հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2023 թվականի հոկտեմբերի 20-ին կայացրել է սեփական նախաձեռնությամբ քննարկում սկսելու մասին որոշում:

<u>Մարդու իրավունքների խախտում արձանագրելու համար նշանակություն ունեցող հանգամանքները.</u>

10. Մարդու իրավունքների պաշտպանը 2023 թվականի օգոստոսի 21-ին գրություն է հասցեագրել ՀՀ ներքին գործերի նախարարին՝ խնդրելով ՀՀ ներքին գործերի նախարարության իրավասության շրջանակում ստուգել և քննարկման առարկա դարձնել նկարագրված բոլոր հանգամանքները և տրամադրել պարզաբանումներ, այդ թվում՝ հետևյալ հարցադրումների վերաբերյալ.

1) ի՞նչ իրավական հիմնավորմամբ են հավաքի մասնակից անձինք ենթարկվել վարչական ձերբակալման և տեղափոխվել Ոստիկանության ստորաբաժանում,

2) արդյո՞ք քաղաքացիներին վարչական ձերբակալման ենթարկելուց առաջ վերջիններիս ներկայացվել է օրինական պահանջ, եթե այո՝ ո՞րն է եղել տվյալ օրինական պահանջը, և ի՞նչ իրավական ակտով է այն ամրագրված,

3) ի՞նչ իրավական հիմնավորմամբ է արգելվել քաղաքացիներին տեղադրել վրան Երևան քաղաքի Մաշտոցի պուրակում, արդյո՞ք նրանց առաջարկվել է վրանը տեղադրել հարակից կամ այլ տարածքում՝ նկատի ունենալով նաև հասարակական անվտանգությունն ապահովելու անհրաժեշտության վերաբերյալ Ոստիկանության կողմից ներկայացված պարզաբանումը,

4) վարչական վարույթի շրջանակում ի՞նչ իրավական հիմնավորմամբ է վրանը պահվում Ոստիկանության ստորաբաժանումում, և ներկայումս ի՞նչ փուլում են գտնվում նախաձեռնված վարչական վարույթները:

11. Վերոնշյալ գրությանն ի պատասխան՝ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետի թիվ 12.2/24166-2023 գրությամբ պարզաբանումներ են ներկայացվել այն մասին, որ քաղաքացի Սուրեն Սահակյանը 2023 թվականի օգոստոսի 16-ին կազմակերպել և իրականացրել է հանրային հավաք-քննարկում Երևան քաղաքի Միսաք Մանուշյանի անվան պուրակում, որի ժամանակ փորձել է հավաքի վայրում տեղադրել վրան, ինչը կանխվել է հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, հասարակական կարգը և անվտանգությունն ապահովող Ոստիկանության ծառայողների կողմից: Ինչպես օգոստոսի 16-ին, դրան հաջորդող օրերին ևս Ս.Սահակյանը համանման հանրային հավաքներ է կազմակերպել և իրականացրել նույն վայրում, որոնց ընթացքում դարձյալ փորձել է վրան տեղադրել հավաքի վայրում՝ պատճառաբանելով, որ վրանն անհրաժեշտ է հավաքն անցկացնելու համար, մասնավորապես, հավաքը շուրջօրյա անցկացնելու իր ցանկությունները և իրավունքներն իրացնելու դեպքում ինքը մտադիր է հանգստանալ, ընդհուպ՝ քնել դրա մեջ:

12. Ըստ ստացված պարզաբանման՝ նշված գործողությունները Ոստիկանության կողմից դիտվել են որպես **հակաօրինական և առհասարակ՝ հակահասարակական,** քանի որ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հավաքը երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ: Մինչդեռ, ըստ Ոստիկանության ներկայացրած պարզաբանման՝ **ակնհայտ է, որ քնած ժամանակ բացառվում է կարծիք արտահայտելու ցանկացած դրսևորում, իսկ հանրային տարածքի այդ եղանակով օգտագործումը հակահասարակական բնույթ է կրում՝ խախտելով հասարակական կարգը:**

13. Բացի այդ, Պաշտպանին ներկայացված պարզաբանմամբ Ոստիկանությունը վկայակոչել է Երևանի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի՝ «Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշումը՝ նշելով, որ Սուրեն Սահակյանի կողմից նշված վայրում վրան տեղադրելուն ուղղված գործողությունները, որպես կանաչ տարածքը հատուկ նպատակներով օգտագործելու դրսևորում, վկայակոչված որոշման իրավակարգավորումների լույսի ներքո դիտարկելիս, համապատասխան պայմաններով պետք է թույլատրված լիներ լիազոր մարմնի կողմից, ինչը, սակայն, բացակայել է:

14. Ըստ ստացված պարզաբանման՝ Ոստիկանությունը բազմիցս պարզաբանել է հավաքի կազմակերպիչ Ս. Սահակյանին, որ հաշվի առնելով հանրային շահը՝ հավաքն անհրաժեշտ է իրականացնել առանց հանրային վայրում վրան տեղադրելու, իսկ նշված գործողություններն իրականացնելիս պահանջել է դադարեցնել դրանք, որը Ս.Սահակյանի, իսկ որոշ դեպքերում նաև հավաքի այլ մասնակիցների կողմից չի կատարվել:

15. Պաշտպանին ներկայացված պարզաբանմամբ նաև նշվել է, որ ստեղծված իրավիճակում Ոստիկանությունը, ղեկավարվելով համաչափության սկզբունքով, նպատակահարմար է գտել օրենքով սահմանված, անհրաժեշտ և խիստ չափավոր վարչական հարկադրանքի միջոցներով կանխել և խափանել նշված հակաօրինական և հակահասարակական գործողությունները, որոնք Ոստիկանության կողմից պիտանի են գնահատվում: Ի հավելումն՝ ներկայացվել է, որ 2023 թվականի օգոստոսի 16-ից յուրաքանչյուր օր Ս. Սահակյանի կողմից Մ. Մանուշյանի անվան պուրակում կազմակերպված բոլոր հավաքների ժամանակ Ոստիկանության կողմից ապահովվել է դրանց խաղաղ և բնականոն ընթացքը, իսկ Ս. Սահակյանի և (կամ) հավաքի այլ մասնակիցների կողմից հավաքի վայրում վրան տեղադրելուց հետո վերջիններից պահանջվել է դադարեցնել նշված գործողությունները՝ վկայակոչելով վերը նշված իրավակարգավորումները: Հասարակական կարգը պահպանող Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար նշված անձինք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 259-262-րդ հոդվածներով սահմանված հիմքով և կարգով ձերբակալվել են և տեղափոխվել Ոստիկանության Կենտրոնական բաժին: Այդ գործողությունների առնչությամբ հարուցվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով սահմանված իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման գործով վարույթներ, իսկ նրանց կողմից օգտագործված (տեղադրված) վրանները

նույն օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված հիմքով և կարգով վերցվել են և ենթակա են պահման վարչական իրավախախտման գործով վարույթն իրականացնող մարմնում՝ Ոստիկանության Կենտրոնական բաժնում՝ մինչև վարույթի ավարտը:

<u>Մարդու իրավունքների պաշտպանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

16. Սույն որոշման շրջանակներում մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայությունը գնահատելու և համապատասխան եզրահանգում կատարելու համար Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում իրավական վերլուծությամբ պատասխանել հետևյալ հարցին.

արդյո՞ք Սուրեն Սահակյանի կողմից կազմակերպված հավաքի ընթացքում Միսաք Մանուշյանի անվան պուրակում վրան տեղադրելը թույլ չտալուն ուղղված գործողությունների արդյունքում խախտվել է հավաքի մասնակիցների՝ հավաքների ազատության իրավունքը:

17. ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝

*«1. **Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:***

2. Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում:

3. Օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ:

4. Հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

*5. **Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:***

ՀՀ Սահմանադրության համաձայն՝

«Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների ***սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:*** *Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ ***սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի****, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:*

Հոդված 80. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

18. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. ***Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության,***

անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: *Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:»:*

19. «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենքի իմաստով հավաքը երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ:

(...)

4. Հավաքի վայրը պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող բացօթյա տարածք (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) կամ շինություն է, որը հավաքի անցկացման նպատակով մատչելի է յուրաքանչյուրի համար: (...)»:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. ***Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության և հասարակական կարգի պահպանումը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջության ու բարոյականության (այսուհետ՝ հանրության շահեր), այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը (այսուհետ՝ այլ անձանց հիմնական իրավունքներ) գերակայում են հավաքի ազատության նկատմամբ:***

(...)»:

Օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. (...) Եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասությունների սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին»:

Օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝

1. Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց հիմնական

իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը:

(...)»:

20. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) իր մի շարք վճիռներում իրավական դիրքորոշումներ է արտահայտել հավաքների ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության մասին: Մասնավորապես, Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ հավաքների ազատության ցանկացած սահմանափակում պետք է ստուգվի համաչափության տեսանկյունից[1]: Համաչափության սկզբունքը շահերի հավասարակշռությունն ապահովելու միջոց է: Այս սկզբունքը հավասարակշռություն է սահմանում մի կողմից միջամտության բնույթի և չափի, մյուս կողմից՝ միջամտության պատճառի միջև: Միջամտության աստիճանը պետք է որոշվի միայն այն արդարացնող նպատակով[2]: Իշխանությունները պետք է գիտակցեն, որ իրենց լիազորությունները չեն սահմանափակվում բացառապես հավաքը արգելելու կամ դրան չմիջամտելու գործառույթներով: Ավելին, հաշվի առնելով, որ հավաքների պարագայում կարող է կիրառվել տարբեր տեսակի միջամտությունների լայն շրջանակ՝ անհրաժեշտ է ապահովել, որ իրավաչափ նպատակներին հասնելու համար կիրառվեն միջամտության նվազագույն միջոցները:

Համաչափության սկզբունքը պահանջում է հավաքի անցկացման վրա ազդող հանգամանքների օբյեկտիվ և մանրամասն գնահատում: Ավելին, եթե այլ իրավունքներ կարող են հակադրվել խաղաղ հավաքների ազատության իրավունքին, ապա վարչական մարմնի որոշումը պետք է հիմնված լինի համապատասխան հակադրվող իրավունքների զուգահեռ վերլուծության վրա:

21. Եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ պետական մարմինները պետք է որոշակի հանդուրժողականություն ցուցաբերեն «անօրինական» խաղաղ հավաքների նկատմամբ: Սա պետք է տարածվի այն դեպքերի վրա, երբ ցույցն անցկացվել է հասարակական վայրում՝ առանց անվտանգությանը սպառնացող ռիսկերի կամ անկարգությունների վտանգի և, եթե ցուցարարների պատճառած անհարմարությունները չեն գերազանցել աննշան անկարգությունների մակարդակը, որը բխում է հասարակական վայրում խաղաղ հավաքների իրավունքի բնականոն իրականացումից[3]:

---

[1] Տե՛ս case of Rassemblement Jurassien Unité Jurassienne v. Switzerland, 1979:
[2] Տե՛ս Feldman, D. Civil Liberties & Human Rights in England and Wales, 2nd ed., Oxford: Oxford University Press, 2002, p.57:
[3] Տե՛ս case of Faber v. Hungary, 2012, § 47, case of Navalnyy v. Russia [GC], 2018, § 131-132:

Ինքնաբուխ հավաքների նկատմամբ ակնկալվող հանդուրժողականության սահմանները կախված են կոնկրետ հանգամանքներից, որպիսիք են, օրինակ՝ դրա հետևանքով առաջացած հասարակական անկարգությունների տևողությունը և աստիճանը: Բացի դրանից, միջամտության հնարավորությունը գնահատելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյոք մասնակիցներին տրվել է ողջամիտ հնարավորություն՝ արտահայտելու իրենց տեսակետը և լքելու վայրը, երբ այդպիսի պահանջ է ներկայացվել[4]:

Հանդուրժողականության սկզբունքը պետք է տարածվի նաև այն հավաքների վրա, որոնք հանգեցրել են «առօրյա կյանքի, ներառյալ՝ երթևեկության, որոշակի խաթարման», ինչը, սակայն, դեռևս բավարար չէ խաղաղ հավաքների ազատության իրավունքը սահմանափակելու համար[5]:

Այս առումով հարկ է ընդգծել նաև, որ հավաքների ժամանակ հանրային տարածքի օգտագործումը նույնքան իրավաչափ է, որքան նման տարածքն առևտրային գործունեության կամ տրանսպորտի կամ հետիոտնի երթևեկության համար օգտագործելը: Հանրային վայրում իրականացվող ցանկացած հավաք կարող է որոշակի անհարմարություն պատճառել, այդ թվում՝ հանգեցնել երթևեկության համար որոշ խոչընդոտների, սակայն եթե ցուցարարները բռնի գործողություններ չեն կատարում, ապա շատ կարևոր է, որ պետությունը խաղաղ հավաքների անցկացման նկատմամբ ցուցաբերի որոշակի աստիճանի հանդուրժողականություն, որպեսզի չիմաստազրկվի Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված հավաքների ազատության իրավունքը[6]:

Այսպիսով, պետությունը պետք է ոչ միայն ապահովի խաղաղ հավաքների ազատության իրավունքը, այլև ձեռնպահ մնա նշված իրավունքի անուղղակի և անհիմն սահմանափակումներից[7]: Խաղաղ հավաքների ազատության իրավունքը ենթակա չէ սահմանափակման, քանի դեռ հավաքի մասնակիցները հավաքի ընթացքում չեն կատարել դատապարտելի արարքներ[8]:

---

[4] Տե՛ս case of Frumkin v. Russia, 2016, § 97:

[5] Տե՛ս case of Balcik and Others v. Turkey, 2007, case of Kudrevičius and Others v. Lithuania [GC], 2015, § 155; case of Malofeeva v. Russia, 2013, §§ 136-137:

[6] Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ.) https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf ; case of Balcik and Others v. Turkey, 2007; case of Ashughyan v. Armenia, 2008:

[7] Տե՛ս case of Djavit An v. Turkey, 200,3 տե՛ս նաև՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան հաղորդում էջեր՝ 62-63 https://www.ombuds.am/images/files/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf :

[8] Տե՛ս case of Ezelin v. France, [CC], 1991:

Ընդ որում, եթե նույնիսկ պետական մարմինները ողջամիտ հիմքեր ունեն եզրակացնելու, որ անհրաժեշտ է սահմանափակումներ կիրառել հավաքի անցկացման ժամանակի կամ վայրի վերաբերյալ, ապա անհրաժեշտ է **հավաքի մասնակիցներին առաջարկել հավաք իրականացնելու այլ վայր կամ ժամանակ: Հարկ է ընդգծել, որ ցանկացած այլընտրանք պետք է ապահովի հավաքի անցկացման նպատակի/ուղերձի արդյունավետ իրականացման հնարավորություն:** Այլ կերպ ասած, հավաքը պետք է անցկացվի թիրախային լսարանին «տեսանելի և լսելի» շրջանակներում (օրինակ՝ անընդունելի է հանդիպումները քաղաքի կենտրոնից հեռու գտնվող շրջաններ տեղափոխելը)[9]:

Ասվածի համատեքստում Եվրոպական դատարանը նաև ընդգծել է, որ **անհամաձայնության ակցիաների իրականացման ձևը և եղանակը դրանց անբաժանելի մասն են կազմում[10]:** Նշված տեսանկյունից, Եվրոպական դատարանի ընդունված չափանիշն այն է, որ կիրառելի ուժը պետք է լինի համաչափ և օրինական՝ միաժամանակ ***հարգելով անհամաձայնության իրականացման ձևն ու եղանակը[11]:***

Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ պետական իշխանությունների կողմից իրենց գործողությունների համաչափությունը հաստատելու համար ներկայացվող հիմքերը պետք է լինեն «վերաբերելի և բավարար», «համոզիչ և ծանրակշիռ» և հիմնված լինեն «համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա»[12]: Կասկածները կամ ենթադրությունները չեն կարող համարվել բավարար: Սա հատկապես կարևոր է, երբ հավաքը վերաբերում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի, կամ առկա են քաղաքական թեմայով ելույթներ[13]:

Հարկ է հավելել, որ Ոստիկանությունը խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրավաչափ միջամտության հնարավորությունը որոշելիս պետք է հաշվի

---

[9] Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ.) https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf :

[10] Տե՛ս Guide on Article 11 of the Convention – Freedom of assembly and association European Court of Human Rights https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_11_ENG.pdf :

[11] Տե՛ս Freedom of Expression: A Guide to the Interpretation and Meaning of Article 10 of the European Convention on Human Rights Toby Mendel Executive Director Centre for Law and Democracy https://rm.coe.int/16806f5bb3 , Guide on Article 11 of the Convention – Freedom of assembly and association European Court of Human Rights, https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_11_ENG.pdf:

[12] Տե՛ս Case of Makhmudov v. Russia, 2007, § 63-65; case of Tankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria, 2001, § 87; case of United Communist Party of Turkey and Others v. Turkey, 1998, § 47:

[13] Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ.) https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf, Christian Democratic Peoples' Party v. Moldova, 2006, §. 71. Տե՛ս նաև՝ Rosca, Secareanu and Others v. Moldova, 2008, § 40:

առնի ստեղծված փաստացի իրավիճակը: Նշյալ իրավունքի իրականացման մերժումը՝ հաշվի չառնելով փաստացի իրավիճակը, հանգեցնում է մի կողմից խաղաղ հավաքների ազատության իրավունքից օգտվել ցանկացող անձանց և մյուս կողմից՝ այլ անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման միջև անարդար հավասարակշռության: Բացառություն են կազմում այն ցույցերը և/կամ հավաքները, որոնք չեն կրում խաղաղ և հանդուրժողական բնույթ և արտահայտվում են բռնի գործողություններով, որոնց դեպքում միայն Ոստիկանության կողմից հավաքի անցկացմանը միջամտելը կլինի իրավաչափ[14]:

Այն պահը, երբ հավաքի մասնակից անձանց ներկայությունը տվյալ վայրում այլևս չի հանդիսանում **«ժամանակավոր»** և դուրս է գալիս հանդուրժողականություն դրսևորելու սկզբունքի սահմաններից, **յուրաքանչյուր դեպքում պետք է որոշվի՝ ըստ կոնկրետ գործի հանգամանքների:** Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի կողմից սահմանված չափանիշն այն է, որ հավաքի մասնակիցներին պետք է տրվեն բավարար հնարավորություններ արտահայտելու իրենց տեսակետները[15]:

22. Վենետիկի հանձնաժողովի կողմից հրապարակված խաղաղ հավաքների վերաբերյալ ուղեցույցում նշվում է, որ խաղաղ հավաքի հետ կապված ֆիզիկական ներգործություն կարող է իրականացվել, երբ դա անհրաժեշտ է պետության, հանրության օրինական շահերը կամ այլ անձանց իրավունքները պաշտպանելու համար՝ այն պայմանով, որ դա կապված չլինի բողոքի/հավաքի ուղերձի հետ: Հավաքի անցկացման/դրսևորման եղանակի սահմանափակումները, օրինակ, կարող են վերաբերել բարձրախոսների, հատուկ սարքավորումների, լուսային և տեսողական էֆեկտների օգտագործմանը **կամ բողոքի ճամբարների կամ այլ ոչ մշտական շինությունների կառուցմանը:** Այս դեպքում ներգործությունը կարող է տեղին լինել՝ պայմանավորված հավաքի անցկացման վայրով կամ օրվա ժամով: Նման սահմանափակումները նույնպես պետք է լինեն համաչափ[16]:

Միևնույն ժամանակ, Վենետիկի հանձնաժողովի կողմից հրապարակված խաղաղ հավաքների վերաբերյալ ուղեցույցում նշվում է, որ իրականացվող ակցիայի

---

[14] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան հաղորդում,էջեր՝ 62-63:

[15] Տե՛ս case of Patyi v. Hungary, 2008,. case of Éva Molnár v. Hungary, 2008, § 42, case of Barraco v. France, 2009 §159, case of Balcik and Others v. Turkey, 2007, Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ.) https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf :

[16] Տե՛ս https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)017rev-e:

վերաբերյալ կիրառվող **«ժամանակավոր» տերմինը** չպետք է բացառի բողոքի ճամբարների կամ այլ ոչ մշտական շինությունների կառուցումը[17]: Օրինակ՝ Եվրոպական դատարանը Ոստիկանության ծառայողների գործողությունների համաչափությունը գնահատելիս նշել է, որ ***թեև Կոնվենցիայի 11-րդ հոդվածը չի երաշխավորում իր ընտրած ցանկացած վայրում ճամբար ստեղծելու իրավունքը, սակայն նման ժամանակավոր կառույցները, որոշակի հանգամանքներում, կարող են քաղաքական արտահայտման ձև լինել, որի սահմանափակումները պետք է համապատասխանեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջներին[18]:***

Մարդու իրավունքների միջամերկյան հանձնաժողովի՝ խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի գրասենյակի 2008 թվականի զեկույցում արտահայտվել է տեսակետ այն մասին, որ հասարակական բողոքի ակցիաներ իրականացնելու ընթացքում գործադուլները, ճանապարհները փակելը, հանրային տարածքը զբաղեցնելը և նույնիսկ անկարգությունները, բնականաբար, կարող են առաջացնել գրգռվածություն և նույնիսկ հանգեցնել վնասի, ինչը պետք է կանխել և վերացնել: Սակայն բողոքի անհամաչափ սահմանափակումները, **հատկապես այն խմբերի դեմ, որոնք հնարավորություն չունեն այլ կերպ իրենց կարծիքը հրապարակայնորեն արտահայտելու, խոսքի ազատության իրավունքի լուրջ խախտում են[19]:**

23. Ընդ որում՝ Եվրոպական դատարանն ընդգծում է, որ առանց նախնական թույլտվության ցույցի կազմակերպումը, որը կարող է անօրինական լինել, միշտ չէ, որ կարող է արդարացնել հավաքների ազատության իրավունքի սահմանափակումը: Թեև հանրային հավաքները կարգավորող կանոնները, օրինակ՝ նախնական ծանուցման համակարգը, կարևոր են հանրային միջոցառումների սահուն անցկացման համար, քանի որ դրանք թույլ են տալիս իշխանություններին նվազագույնի հասցնել երթևեկության խաթարումը և ձեռնարկել անվտանգության այլ միջոցներ, ***սակայն դրանց կիրառումը չի կարող ինքնանպատակ լինել[20]:***

24. Եվրոպական դատարանը անդրադարձել է նաև հավաքների իրականացման առանձնահատկություններին պետական և մասնավոր սեփականություն հանդիսացող

---

[17] Տե՛ս https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)020-e:

[18] Տե՛ս case of Frumkin v. Russia, (Application no. 74568/12) judgment 2016, § 107:

[19] Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ .)https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf § 20:

[20] Տե՛ս Guide on Article 11 of the Convention – Freedom of assembly and association European Court of Human Rights https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_11_ENG.pdf, case of Cisse v. France, 2002 § 50; case of Oya Ataman v. Turkey, 2006 § 37-39; case of Gafgaz Mammadov v. Azerbaijan, 2015 § 59:

տարածքներում: Եվրոպական դատարանն անդամ պետությունների համար հստակ սահմանել է այն պահանջը, որի համաձայն՝ հավաքների մասնակիցները նույնքան իրավունք ունեն ողջամիտ ժամկետում օգտագործելու համապատասխան ընդհանուր օգտագործման տարածքները, որքան այլ անձինք՝ այլ առօրեական նպատակներով[21]: Միևնույն ժամանակ, խաղաղ հավաքների ազատության իրավունքը ներառում է նաև մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքում հավաքների անցկացման հնարավորություն[22]: Այսպիսով, Եվրոպական դատարանը նշել է, որ խաղաղ հավաքների ազատության իրավունքը պետք է ապահովվի և՛ հանրային, և՛ մասնավոր վայրում[23]:

Այնուամենայնիվ, հավաքների անցկացումը մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքների օգտագործմամբ առաջ է բերում հարցեր, որոնք տարբերվում են հանրային սեփականության օգտագործման հետ կապված խնդիրներից[24]: Ամենակարևոր խնդիրներից մեկն այս պարագայում այն է, որ հավաքի մասնակիցների գործողությունները, այդ թվում՝ տարածքը զբաղեցնելը չպետք է հանգեցնեն սեփականատիրոջ իրավունքների, ինչպես նաև հասարակության այլ անդամների իրավունքների խախտման:

Սա հատկապես կարևոր է այն դեպքերում, **երբ տարածքը զբաղեցվում է մի քանի ամիս շարունակ, և պարզ չէ, թե երբ կդադարի ակցիան[25]**: Ակցիայի, այդ թվում՝ **վրանի տեղադրմամբ իրականացվող,** անցկացման նախապես համաձայնեցված ժամկետների պահպանման կարևորությունը նշվում է նաև մի շարք այլ որոշումներում[26]:

Քննարկված գործերից մեկով Եվրոպական դատարանը նշել է, որ թեև ներպետական դատարանները կայացրել են ակտեր ակցիա իրականացնող անձանց դեմ, սակայն նրանց հիմնական փաստարկն այն է եղել, որ բողոքի ակցիան տեղի է ունեցել շուրջօրյա ռեժիմով բազմաբնակարան շենքի անմիջական հարևանությամբ՝ անհանգստություն առաջացնելով բնակիչների շրջանում, իսկ վրանային քաղաքում սանիտարահիգիենիկ պայմանների բացակայությունը հասարակության համար

---

21 Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ.)https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf § 21:

22 Տե՛ս case of Djavit An v. Turkey, 2003, §. 56, case of Rassemblement Jurassien and Unité Jurassienne v. Switzerland, 1979, § 119:

23 Տե՛ս case of Balcik and Others v. Turkey, 2007:

24 Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ.)https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf § 22:

25 Տե՛ս City of London v Samede and others: ([2012] EWCA Civ 160: Court of Appeal (England and Wales) (Civil Division): Lord Neuberger MR, Stanley Burnton and McFarlane LJJ, 22 February 2012:

26 Տե՛ս Case of G. and E. v/Norway, Decision of 3 october 1983 on the admissibility of the applications:

սանիտարահիգիենիկ վտանգ է ներկայացրել[27]: Հաշվի առնելով վերոգրյալը՝ նշված դեպքում ***Եվրոպական դատարանն արձանագրել է, որ բողոքի ակցիայի ցրումը և վրանների հեռացումը անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում և չեն կարող համարվել անհամաչափ հետապնդվող օրինական նպատակին:***

Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանը տարբեր որոշումներում արտահայտել է այն տեսակետը, որ խաղաղ կերպով հանրային նշանակության որոշակի տարածքներ, այդ թվում՝ շենքեր երկարատև զբաղեցնելը, թեև ակնհայտորեն կարող է խախտել ներպետական օրենսդրությունը կամ առաջացնել որոշակի խնդիրներ, այնուամենայնիվ, հնարավոր է դիտարկել որպես «խաղաղ հավաք»[28]:

Եվրոպական դատարանը Սիսսն ընդդեմ Ֆրանսիայի գործով արձանագրել է, որ Փարիզի եկեղեցիներից մեկից՝ երկու ամիս տարածքը զբաղեցրած շուրջ 200 ապօրինի միգրանտների դուրսբերումը համարվում է միջամտություն հավաքների ազատության իրավունքի իրացմանը: Ըստ նշված գործի հանգամանքների՝ առանց վավեր կացության թույլտվության մի խումբ օտարերկրացիներ որոշել էին կոլեկտիվ գործողություններ ձեռնարկել՝ Ֆրանսիայում իրենց կարգավիճակի վերանայման հարցի կապակցությամբ առաջացող դժվարություններին ուշադրություն հրավիրելու համար: Նրանց քարոզարշավը գագաթնակետին հասավ 1996 թվականի հունիսի 28-ին՝ Սուրբ Բերնարդի եկեղեցին գրավելու որոշմամբ, որտեղ խումբը բնակություն հաստատեց մոտ երկու ամիս: Ընդ որում՝ ոչ եկեղեցու քահանան, ոչ էլ ծխական խորհուրդը չէին առարկել նրանց ներկայությանը, և կրոնական արարողություններն ու ծիսակարգերը կատարվում էին՝ ըստ նախատեսվածի և առանց միջադեպերի: Ուստի, նրանց տարհանումը Եվրոպական դատարանի կողմից դիտարկվել է որպես միջամտություն հավաքների ազատության իրավունքի իրացմանը[29]:

Աննենկովն և այլք ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը արձանագրել է, որ դիմումատուների վարքագիծը, որն, ըստ էության, դրսևորվել էր հողատարածքներին և այլ տարածքներին տիրանալով, այդ թվում՝ գիշերային ժամերին՝ «գիշերային հերթափոխ» իրականացնելով, Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով անվիճարկելիորեն հանդիսանում էր «հավաք»: Ավելին, Եվրոպական դատարանը համարել է, որ հավաքի ընթացքում մասնակիցների

---

[27] Տ ե՛ ս case of Petrenco v. The republic of Moldova, 2021:
[28] Տ ե՛ ս՝ Guide on Article 11 of the Convention – Freedom of assembly and association European Court of Human Rights https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_11_ENG.pdf :
[29] Տ ե՛ ս case of Cisse v. France, judgment, 2002, § 39-40:

վարքագիծն այն բնույթի ու աստիճանի չի եղել, որ անհրաժեշտ լիներ սահմանափակել նրանց հավաքների ազատության իրավունքը[30]:

Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույցում անդրադարձ է արվում նաև Եվրոպական դատարանի վերոգրյալ դիրքորոշումների արդյունավետ կիրառմանը ներպետական դատարաններում: Այսպես՝ Եվրոպական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո Անգլիայի և Ուելսի վերաքննիչ դատարանի կողմից արձանագրվել է հավաքների անցկացման հնարավորությունը անգամ տասնամյակներ նույն վայրում գտնվող վրանային ճամբարում՝ այն դեպքերում, երբ դա չի վտանգում հասարակության այլ անդամների սահմանադրական իրավունքները կամ հասարակական անվտանգությունը: Այս առումով հատկանշական է Մեծ Բրիտանիայի «Ալդերմաստոն» կանանց խաղաղության ճամբարի (AWPC) դեպքը, որը շուրջ **23 տարի** տեղակայվել է **պետական սեփականություն հանդիսացող հողատարածքում՝** միջուկային զենքի օբյեկտի մոտ: Կանայք հավաքվել են այդ ճամբարում երկու շաբաթը մեկ՝ պիկետներ և ժողովներ իրականացրել, թռուցիկներ բաժանել[31]: Նշված գործի շրջանակում Անգլիայի և Ուելսի վերաքննիչ դատարանը որոշել է, որ ենթաօրենսդրական ակտերը, որոնք արգելում են Ալդերմաստոնի ատոմային զենքերի հաստատության մոտակայքում ճամբարի տեղակայումը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո հանդիսանում են ապօրինի միջամտություն «Ալդերմաստոն կանանց խաղաղության ճամբարի» անդամների արտահայտվելու և խաղաղ միավորումների ազատության իրավունքին: Ավելին, Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարի ենթաօրենսդրական ակտը, որն արգելել է վրաններով, շարժական տներով, ծառերով և այլ նմանատիպ միջոցներով ճամբարների ստեղծումը «վերահսկվող հողում», **համարվել է ազատ կամարտահայտման և հավաքների ազատության իրավունքները խախտող,** քանի որ ակցիայի նման հատուկ բնույթը և բողոքի ձևը (ճամբարը) արդեն ստացել են բողոքի ուղերձից բխող անբաժան խորհրդանշական նշանակություն[32]:

25. Անդրադառնալով հարցի վերաբերյալ արտասահմանյան փորձին՝ հարկ է նշել, որ «Հանրային հավաքների մասին» Ֆինլանդիայի օրենքի համաձայն՝ հանրահավաքների ժամանակ կարող են օգտագործվել պաստառներ,

---

[30] Տե՛ս case of Annenkov and others v. Russia, judgment, 2017, § 123,126:

[31] Տե՛ս Tabernacle Aldermaston Women's Peace Camp ('the AWPC') v Secretary of State for Defence [2009] EWCA Civ 23 (05 February 2009):

[32] Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ.)https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf:

տարբերանշաններ, բարձրախոսներ և այլ սարքավորումներ, որոնք սովորաբար օգտագործվում են հանրահավաքների ժամանակ, թույլատրվում է նաև ժամանակավոր շինությունների կառուցում: Այս դեպքում կազմակերպիչը պարտավոր է համոզվել, որ նման գործողությունները չեն հանգեցնի որևէ վտանգի, անհամաչափ անհարմարության կամ չեն վնասի մասնակիցներին, անցորդներին կամ շրջակա միջավայրին[33]:

26. Հարկ է ընդգծել, որ նշված **խնդրին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների պաշտպանը** 2013 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան հաղորդմամբ: Մասնավորապես, հաղորդման մեջ նշվել է, որ ինչպես 2012, այնպես էլ 2013 թվականին շարունակվել են գրանցվել դեպքեր, երբ տարբեր հավաքների ժամանակ հավաքի մասնակիցների նկատմամբ համապատասխան մարմինների կողմից դրսևորվել են տարբերակված մոտեցումներ, օրինակ՝ հավաքի ժամանակ վրանի տեղադրման հարցում: Այսպես, Երևանի քաղաքապետարանի առջև նստացույցի միջոցով իրենց բողոքն արտահայտող մի խումբ քաղաքացիներ հրապարակայնորեն դիմել են Պաշտպանին և հայտնել, որ կիզիչ արևից պաշտպանության միջոցներ չթույլատրելու, լուսավորության անջատումների եղանակներով պարբերաբար հոգեբանական և ֆիզիկական ճնշումներ են գործադրվում իրենց նկատմամբ: Նստացույցի ողջ ընթացքում ստացվել են բազմաթիվ ահազանգեր, և Պաշտպանի ներկայացուցիչները տեղում արձանագրել են, որ նշվածի կապակցությամբ առանձին պնդումներ համապատասխանում են իրականությանը:

Բացի նշվածից, 2013 թվականին արձանագրվել է դեպք, երբ խաղաղ հավաքների մասնակիցներին Ոստիկանության կողմից արգելվել է գիշերային ժամերին և եղանակային վատ պայմանների դեպքում պատսպարվել վրանում: Ոստիկանության նման գործունեության հետևանքով, ըստ էության, ոչ միայն խախտվել է անձի՝ հավաքների ազատության իրավունքը, այլև միաժամանակ վտանգվել է հավաքի մասնակիցների առողջությունը և անվտանգությունը: ***Խաղաղ հավաքների ժամանակ առարկաների օգտագործման, տվյալ դեպքում՝ վրանի տեղադրման հետևանքով այլ անձանց սահմանադրական իրավունքների իրականացման (ազատ տեղաշարժման իրավունք, հանրային վայրերից օգտվելու իրավունք) հնարավոր սահմանափակման կամ կանաչապատ***

[33] Տե՛ս Assembly Act (530/1999; AMENDMENTS UP TO 824/2002 INCLUDED), Chapter 2, Section 11 https://finlex.fi/en/laki/kaannokset/1999/en19990530_20020824.pdf:

տարածքները վնասելու և այլ տարբեր պատճառաբանությունների կապակցությամբ հաղորդման շրջանակներում նշվել է, որ մարդու կյանքի և առողջության իրավունքները չպետք է ստորադասվեն այլ անձանց իրավունքներին:

Հաղորդմամբ շեշտադրվել է նաև անդամ պետությունների համար Եվրոպական դատարանի կողմից սահմանված այն պահանջը, որի համաձայն՝ հավաքների մասնակիցները նույնքան իրավունք ունեն ողջամիտ ժամկետում օգտագործելու համապատասխան ընդհանուր օգտագործման տարածքները, որքան այլ անձինք՝ այլ առօրեական նպատակներով:

Նշվածի առնչությամբ Պաշտպանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանի հստակ դիրքորոշումների համատեքստում և պահանջների բավարարման դեպքում հավաքների, ցույցերի ընթացքում պետության կողմից ոչ մշտական կառույցների և վրանների տեղադրման արգելումը չի կարող իրավաչափ դիտարկվել: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից, հանդիսանում է կենդանի փաստաթուղթ և պետք է մեկնաբանվի «արդի օրվա պայմանների» լույսի ներքո՝ հասարակության զարգացմանը զուգընթաց: Ուստի հավաքներ անցկացնելու և դրանց ընթացքում առնվազն մեկ վրան տեղադրելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը ոչ միայն հանդիսանում է ՀՀ օրենսդրության խախտում, այլ նաև՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտում[34]:

27. Վերոնշյալ իրավակարգավորումների, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և միջազգային իրավական չափանիշների վերլուծության արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ հավաքների ազատության իրավունքը ներառում է նաև հավաքի ընթացքում ժամանակավոր շինություններ կամ վրան տեղադրելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ նշված իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն սահմանափակումը հնարավոր է բացառապես կոնկրետ իրավական չափանիշների պահպանմամբ: Մասնավորապես, նման սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով, հետապնդեն իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում:

---

[34] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 62-63 https://www.ombuds.am/images/files/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf:

Պաշտպանն ընդգծում է, որ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման համաչափության սկզբունքը պահանջում է յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավաքի անցկացման վրա ազդող հանգամանքների օբյեկտիվ և մանրամասն գնահատում: Հավաքի ազատության իրավունքի սահմանափակումը կամ վրանը հեռացնելը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, իսկ պետության կողմից հավաքի ազատությունը սահմանափակելուն ուղղված գործողությունների համաչափությունը հաստատելու համար ներկայացվող հիմնավորումները պետք է լինեն «վերաբերելի և բավարար», «համոզիչ և ծանրակշիռ», և հիմնված լինեն «համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա»:

Ավելին, ըստ Եվրոպական դատարանի իրավաբանության՝ պետական մարմինները պետք է որոշակի հանդուրժողականություն ցուցաբերեն նույնիսկ «անօրինական» խաղաղ հավաքների նկատմամբ, եթե դրանք չեն պարունակում անվտանգությանը սպառնացող ռիսկեր, և եթե հավաքի մասնակիցների պատճառած անհարմարությունները չեն գերազանցում աննշան անկարգությունների մակարդակը, որը բխում է հասարակական վայրում խաղաղ հավաքների իրավունքի բնականոն իրականացումից: Հանդուրժողականության սկզբունքը պետք է տարածվի նաև այն հավաքների վրա, որոնք հանգեցրել են սովորական կյանքի, ներառյալ՝ երթևեկության որոշակի խաթարման, քանի որ միայն այդ հանգամանքը բավարար չէ նշված իրավունքը սահմանափակելու համար:

Ընդհանուր առմամբ, Եվրոպական դատարանի կողմից սահմանված չափանիշն այն է, որ հավաքի մասնակիցներին պետք է տրվեն բավարար հնարավորություններ արտահայտելու իրենց տեսակետները, քանի որ հավաքների մասնակիցները նույնքան իրավունք ունեն ողջամիտ ժամկետով օգտագործելու համապատասխան ընդհանուր օգտագործման տարածքները, որքան այլ անձինք՝ առօրեական նպատակներով:

28. Սույն որոշման նախորդ կետերում կատարված վերլուծության համատեքստում դիտարկելով բողոքի քննարկման շրջանակում Ոստիկանությունից ստացված պարզաբանումները՝ Պաշտպանն արձանագրում է, որ դրանք բավարար չափով համոզիչ չեն և չեն համապատասխանում հավաքների ազատությունն իրավաչափորեն սահմանափակելու՝ Սահմանադրությամբ նախատեսված և Եվրոպական դատարանի կողմից սահմանված չափանիշներին:

Այսպես, Ոստիկանությունը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ «հավաքի

մասնակիցների կողմից վրան տեղադրելուն և դրանց մեջ քնելուն ուղղված գործողությունները չեն կարող դիտարկվել հավաքի անցկացում, քանի որ դրա արդյունքում բացառվում է կարծիք արտահայտելու ցանկացած դրսևորում»՝ այդպիսով Սուրեն Սահակյանի կողմից վրան տեղադրելուն ուղղված գործողությունները դիտարկելով հակահասարակական: Մինչդեռ Ոստիկանության կողմից չեն ներկայացվել **համոզիչ և ծանրակշիռ փաստարկներ**՝ թե նշված գործողությունների արդյունքում ի՞նչպես է խախտվել հասարակական կարգը, անվտանգությունը, կամ ի՞նչպես է հանրային տարածքի նման եղանակով օգտագործումը հակադրվում հանրային շահին կամ խախտում այլ անձանց հիմնական իրավունքները:

Ավելին, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, անգամ հավաքի մասնակիցների գործողություններով «սովորական կյանքի, ներառյալ՝ երթևեկության, որոշակի խաթարման» պարագայում Ոստիկանության ծառայողների կողմից հավաքի մասնակիցներին պետք է առաջարկվի հավաքի անցկացման վայրի այլընտրանք, որը կապահովի հավաքի նպատակի արդյունավետ իրացման հնարավորությունը: Մինչդեռ, ըստ հավաքի մասնակիցների, նրանց հավաքի անցկացման վայրի այլընտրանք չի առաջարկվել: Նման այլընտրանք առաջարկելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ նաև Ոստիկանության կողմից ներկայացված պարզաբանման շրջանակներում:

Բացի այդ, ստացված պարզաբանմամբ՝ Ոստիկանությունը վկայակոչել է Երևանի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի՝ «Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշումը՝ նշելով, որ Սուրեն Սահակյանի կողմից նշված վայրում վրան տեղադրելու գործողությունները, որպես կանաչ տարածքը հատուկ նպատակներով օգտագործելու դրսևորում, վկայակոչված որոշման իրավակարգավորումների լույսի ներքո դիտարկելիս, համապատասխան պայմաններով պետք է թույլատրված լիներ լիազոր մարմնի կողմից, ինչը, սակայն, բացակայել է:

Վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանը, նախ և առաջ, հարկ է համարում նշել, որ Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումների համաձայն՝ հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ընդ որում՝

սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Ավելին, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Եվրոպական դատարանի մեջբերված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներում հստակ արձանագրված է, որ ակցիայի ժամանակավոր բնույթը չի բացառում ճամբարների կամ այլ ոչ մշտական շինությունների կառուցումը: Ուստի, պետության կողմից դրանց տեղադրման արգելումը կարող է իրավաչափ համարվել **բացառապես ծանրակշիռ և համոզիչ փաստարկների ներկայացման և իրավունքի սահմանափակման իրավաչափության չափանիշների պահպանման պարագայում**, որպիսի հանգամանքը բացակայել է նաև Երևանի ավագանու վերը նշված որոշումը վկայակոչելիս:

Պաշտպանն ընդգծում է, որ հիմնական իրավունքի սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով, հետապնդեն իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում: Հիմնական իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավասու պետական մարմինները պարտավոր են պահպանել իրավունքի սահմանափակման իրավաչափության՝ ժամանակակից աշխարհում ընդունված չափանիշները՝ իրավունքի սահմանափակումը հիմնավորելով ծանրակշիռ և համոզիչ փաստարկներով: Այս համատեքստում կարևոր է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն սահմանված իրավաչափ նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Ասվածն առանցքային է ոչ միայն այս, այլև ցանկացած այլ գործի համատեքստում: Ընդ որում՝ իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատման է ենթակա անհատապես՝ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում՝ դեպքին վերաբերելի հանգամանքների և քննարկվող չափանիշների համադրման և մանրամասն վերլուծության արդյունքում:

Ամփոփելով՝ Պաշտպանն արձանագրում է, որ 2023 թվականի օգոստոսի 16-ին և հաջորդած օրերին Մ. Մանուշյանի անվան պուրակում հավաքի մասնակիցների կողմից վրան տեղադրելը խոչընդոտելուն ուղղված Ոստիկանության ծառայողների գործողությունները չեն համապատասխանել մարդու իրավունքների սահմանափակման իրավաչափության չափանիշներին, ներկայացված պատճառաբանությունների համատեքստում դրանք չեն կարող դիտարկվել անհրաժեշտ և համաչափ, իսկ Ոստիկանության կողմից ներկայացված հիմնավորումները հիմնական իրավունքի սահմանափակման համար ծանրակշիռ և համոզիչ չեն:

29. Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Հաստատված համարել, որ սույն որոշմամբ քննարկվող կոնկրետ իրավիճակում և Ոստիկանության ներկայացրած պարզաբանումների համատեքստում հավաքի մասնակիցների կողմից վրան տեղադրելը թույլ չտալուն ուղղված գործողությունների հետևանքով խախտվել է հավաքի մասնակիցների հավաքների ազատության իրավունքը:

2. Առաջարկել ՀՀ ներքին գործերի նախարարին՝

ա) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի երաշխավորման և իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների գիտելիքների և կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ներպետական և միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ,

բ) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանափակման իրավաչափության չափանիշները պահպանելու ուղղությամբ՝ իրավունքի սահմանափակումը հիմնավորելով ծանրակշիռ և համոզիչ փաստարկներով:

3. Որոշումն ուղարկել ՀՀ ներքին գործերի նախարարին:

Ա. ՄԱՆԱՍՅԱՆ